ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-17/2 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ դրոշների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 21.06.2017թ. N 66/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 07.07.2017թ. ժամը 15-00-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Գ.Երեղյանը, Ա.Եղիազարյանը, Մ.Սարդարյանը, Ա.Հայրապետյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-17/2 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն ու առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը/կցվում է/՝ գնահատող հանձնաժողովի նախագահ Լ.Հարությունյանը ներկայացրեց հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները/գնահատման թերթիկները կցվում է/, որի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝
-Հաշվի առնելով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվությունը, ինչպես նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին՝
-1-ին չափաբաժնով առաջին տեղը զբաղեցրած «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-17/2 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հայտարարել անգործության ժամկետ, հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:
-Անգործության ժամկետի ավարտից հետո ներկայացնել առաջարկ ընտրված մասնակիցներ «Շուշան Տեխնիկս» ՍՊԸ-ի՝ պայմանագիր կնքելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյան

Անդամներ՝ Գ.Երեղյան

Ա.Եղիազարյան

Մ.Սարդարյան

Ա.Հայրապետյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան